Հավելված N 1
«ՔՋԲԿ-ԳՀԱՊՁԲ-ՊԱՐ-20/2»* ծածկագրով
գնանշման հարցման ընթացակարգի հրավերի

## ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*
գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու

«ԼԵՅԿՈ» ՍՊԸ-ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել <<Քանաքեռ-Զեյթուն>> ԲԿ ՓԲԸ -ի կողմից «ՔՋԲԿ-ԳՀԱՊՁԲ-ՊԱՐ-20/2» ծածկագրով հայտարարված գնանշման հարցման ընթացակարգի 5, 6, 7, 9, 11, 12, 13, 14, 16, 17, 46, 47, 64, 78, 80, 81, 82, 83, 84, 85, 86, 99, 108, 109, 119 չափաբաժնին (չափաբաժիններին) և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

«ԼԵՅԿՈ» ՍՊԸ -ն հայտնում և հավաստում է, որ հանդիսանում է ՀՀ ռեզիդենտ:

«ԼԵՅԿՈ» ՍՊԸ -ի՝

- հարկ վճարողի հաշվառման համարն է՝ <<01224924>>
- էլեկտրոնային փոստի հասցեն է՝ leykoalex@gmail.com:
- գործունեության հասցեն է՝ ք. Երևան, Ֆուչիկի 27/14
- հեռախոսահամարն է՝ 010-35-03-03

Սույնով «ԼԵՅԿՈ» ՍՊԸ -ն հայտարարում և հավաստում է, որ՝

1) բավարարում է «ՔՋԲԿ-ԳՀԱՊՁԲ-ՊԱՐ-20/2»* ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում.

2) «ՔՋԲԿ-ԳՀԱՊՁԲ-ՊԱՐ-20/2»* ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու շրջանակում՝

- թույլ չի տվել և (կամ) թույլ չի տալու գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն,
- բացակայում է հրավերով սահմանված՝ «ԼԵՅԿՈ» ՍՊԸ -ին փոխկապակցված անձանց և (կամ) «ԼԵՅԿՈ» ՍՊԸ-ի կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս «ԼԵՅԿՈ» ՍՊԸ –ին պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության դեպք:
- ստորև ներկայացնում է հայտը ներկայացնելու օրվա դրությամբ այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին (իրական շահառուներ)** և հավաստում, որ իրական շահառուների մասին ներկայացված տեղեկատվությունը իրական է և չի պարունակում ոչ հավաստի տեղեկություններ:

| Անունը Ազգանունը Հայրանունը | ՀՀ քաղաքացիների համար՝ նույնականացման քարտի կամ անձնագրի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը | Օտարերկրյա քաղաքացիների համար համապատասխան երկրի օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը |
|---|---|---|